ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> ----------07----------2025թ. N ՄՈ 751-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈԲՅԱՆԻՆ «ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հուլիսի 28-ի զեկուցագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հուլիսի 29-ի ՆՄՈ/748-Ա որոշումը.

որոշում եմ՝

1. «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները վերապահել «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հայկանուշ Մեսրոբյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2025 թվականի հուլիսի 23-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-30 16:22:09 GMT+4
Հաստատված է EKENG-ի կողմից

mID

Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ